# Ռուբեն Սևակ

## Գիշերին մեջ

Հայկ եղբորս հիշատակին

Կլայնա երկինքը անծա՛յր ու ջի՛նջ,
Գյուղին վրա քիչ քիչ մութը կըկոխե,
Ամեն բան իրեն գույնը կըփոխե,
Հանդա՛ռտ ամեն կողմ, մո՛ւթ է ամեն ինչ:

Վարդն իր աչքերը կգոցե մութին.
Ծառերն են կեցեր լո՛ւռ, բազկատարա՛ծ.
Նոճին իր գլուխն է վեր կարկառած.
Լույսեր կ՚արյունին ծառերեն անդին:

Ահա կքննա բնությունն համակ.
Կայնքը դադրեցավ. թռչուն մը մինակ,
Միս մինակ – ինչո՞ւ – կ՚երգե տրտմունակ:

Գիշերային այս լռության մեջ խորին,
Իր սրտաբուխ երգերն սրտես կթռին,
Ու մինակ-մինա՛կ – ես կու լամ լռին…